



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

11 հունիսի 2014 թ. № 141 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի № 25-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ *հրամայում եմ*.

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից երիտասարդներին ուղևորության դրամաշնորհների տրամադրման կարգը, դիմումի և հաշվետվության ձևերը հաստատելու մասին» № 25-Ա/1 հրամանի (այսուհետ՝ Հրաման) № 1 հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետից հետո լրացնել՝ «ե) պաշտոնական հրավերը և հայերեն թարգմանությունը»:

2. Հրամանի № 1 հավելվածի 6-րդ կետից հետո լրացնել՝

«7. Նույն ժամանակահատվածում միևնույն միջազգային երիտասարդական ծրագրին, ֆորումին, հանդիպմանը, գիտաժողովին, գիտատեխնիկական մրցույթին, մշակութային ծրագրին մասնակցելու համար ուղևորության դրամաշնորհ տրամադրելու մասին մեկից ավելի դիմումների առկայության դեպքում տրվում է միայն մեկ դրամաշնորհ՝ երիտասարդների ուղևորության դրամաշնորհների դիմումների քննարկման նպատակով ստեղծված հանձնաժողովի պատճառաբանված որոշման հիման վրա:

8. Միևնույն անձին նույն տարվա ընթացքում մեկ անգամից ավել ուղևորության դրամաշնորհ չի տրամադրվում»:

3. Հրամանի № 2 հավելվածի «դիմումատուի անունը, ազգանունը, հայրանունը» բառերը փոխարինել «դիմումատուի անունը, հայրանունը, ազգանունը» բառերով:



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ